Ուրեմն ներեցէք ինձ ասել Ձեզ մի քանի խօսք, ամենեւին անզարդ և անպաճոյճ, բայց առ ի սրտէ, մի քանի խօսք յանուն Ներսիսեան դպրոցի պատուելի Հոգաբարձուների, յանուն նորա մէջ աշխատաւորների, յանուն իմ, որ Ձերովդ վեհազգոյն հաւանութեամբ կոչուած եմ սպասաւորել Հայկազեան մանուկների կրթութեանը և դաստիարակութեանը Վրաստանիս մայրաքաղաքում։

Ներսիսեան դպրոցի Հոգաբարձուքը, նորա ուսուցիչ պաշտօնակատարքը և ես առ ի սրտէ շնորհաւորելով Ձեր սուրբ օծման այս երրորդ տարեդարձը, մաղթումենք Ձեզ ի վերուստ երկար և երջանիկ օրեր, կեանքի արկածներից անփորձ և անխռով օրեր, անդորրութիւն մտքի, պայծառութիւն հոգւոյ, անբեկանելի արիութիւն Կամքի։ Ո՛չ փոքրիկ են մեր յոյսերը Քեզանից, Դու մեծ Քահանայ, ո՛չ փոքրիկ մեր արդարացի ակնկալութիւնքը․ բայց մեք քաջահաւատ եմք և վստահ միանգամայն, որ Դու, մեր նազելի վեհազգոյն Գըլուխդ, քոյին խորին իմացականութեամբ և շրջահայեաց տեսութեամբ կը հասկանաս այս մեր խորհրդաւոր ժամանակի և այժմեան հայկազեան սերունդի բազմամաննեայ պիտոյքը, կը լինիս պարագլուխ և նահապետ Հայկազեան լուսաւորութեան, երկրորդ Սահակ պարթև, քաջալերող, պաշտպանող և ժողովող ուսման և գիտութեան, ուսումնականների։ Մեք քաջահաւատ ենք, որ Վրաստանիս մայրաքաղաքի մէջ եղած Ներսիսեան դպրոցը Ձեր Վեհափառութեան կարող և իմաստուն հովանաւորութեան ներքոյ կ'աճէ, կզօրանայ, կը ծաղկի և կը պտղաբերէ կեանքի գործեր. Մեք քաջահաւատ ենք, որ գալոց օրերում Հայկազեան սերունդը կը պատմէ իւր զաւակներին. Ներսէս հինգերորդը տնկեց և սերմանեց, բայց Գէորգ չորրորդը ջուր տու, իսկ Աստուած աճեցոյց։

Կեցցե՛ս դու, Վեհազգոյն գլուխդ մեր, կեցցես բարօրութեամբ վասն բարօրութեան քո՛ և զքեզ սիրող և մեծարող ազգի, որոյ աչքը և հոգիքը և սրտերը դարձուցած են առ Քեզ եւ ի վերայ քո։

Ս․ Նազարեանց։

~~~~~~~~

ԱՐԺԱՆԱՑԻՇԱՏԱԿ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ ԻՇԽԱՆԻ ԿՏԱԿԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ.

Ո՛չ սակաւ ուրախութեամբ հանդերձ խորին շնորհակալութեամբք կը փութամք հաղորդել մեր սիրելի Ազգայնոց, զի անցեալ մայիս ամսոյ մէջ հանգուցեալ արժանայիշատակ և անմահ բարերար Դաշրաման Արղութեանց իշխանի կտակակատարք ամենայն սիրով կատարած են նոյն բարերարին կամքը, որ Աղեքսանդրապօլ քաղաքի մէջ Ազգային աղքատիկ օրիորդաց Ուսումնարան հաստատելոյ և կառավարելոյ համար 40 հազար ռուբլի կտակած և նուիրած է. ուստի և արժանացան ընդունիլ 'ի Վեհ. Կաթողիկոսէ՝ օրհնութեան և գոհունակութեան Կոնդակ։

Նոյնպէս Կոնդակաւ Նորին Ս. Օծութեան՝ Հոգաբարձութիւն ևս հաստատուած է նոյն ուսումնարանի համար. հետեւաբար այսուհետև անհրաժեշտ պարտք կը մնայ նոյն Հոգաբարձութեան, ուսումնարանի շինութեան և կառավարութեան միջոցներուն պէտք եղած կարգադրութեանց կատարումը, և անմահ բարերարին Ազգօգուտ և բարենախանձ նպատակին իրագործութիւնը և արդիւնաւորութիւնը՝ Ազգիս ապագային համար օր ըստ օրէ զարգացնելով։

~~~~~~~~

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Ի ՆԵՐՍԻՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆ ՏՓԽԻՍԱՑ.

Ամսոյս 1-ին Վեհ. Կաթողիկոսը բարեհաճեցաւ երթալ յայցելութիւն Ներսիսեան Ազգ.—Հոգեւոր Ուսումնարանին Հայոց Տփխիսայ:

Ի ներկայութեան Նորին Ս. Օծութեան՝ Կրօնական գիտութեանց և Ազգային պատմութեան և այլոց քննութիւնք եղան: Այս առթիւ Տեսուչ Մեծ. Ստեփան Նազարեանց՝ ընթերցաւ մի ճառ: Իսկ ապա Նորին Ս. Օծութիւնն մի համառօտ յորդոր ուղղեց Մեծ. Հոգաբարձուաց, Տեսչին, դասատուաց և աշակերտաց. և օրհնեց զամենեսեան և վերադարձաւ 'ի Վեհարանն:

Ահաւասիկ նոյն ճառը:

ՅԱՍՏՈՒԱԾՈՒՍՏ ՊԱՏՈՒԵԱԼ ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԹՈՌԱԿԱԼ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ, ՎԵՐԱԴԻՏՈՂ ՏԱՆՍ ՀԱՅԿԱԶԱՆՑ.

Ներփակեալ Ազգային Հոգևոր Դպրոցս այս խրովքն կառավարիչ Հոգաբարձուք, աշխատաւոր Ուսուցիչք և մատաղերամ մանկունս ընդ յարկաւ սորա, արժանացեալ 'ի ժամու Քումդ Հայրապետական այցելութեան, զԻ՞նչ արդեօք 'ի պատկանաւորագունիցն առ Քեզ բարբառեսցի, եթէ ոչ զերկրեալն հոգւով բան ողջունական. բարեաւ եկիր, ողջամբ հասեր առ սիրելի զաւակս Քո, Վեհամեծար Հայրապետ Հայկազեանս գերդաստանի.

Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ Հօր սիրելւոյ զկնի երկարատեւն անջատման իջանել յողջոյն իւրոց զաւակաց և սոցա դարձեալ խանդակաթ սիրով փարել զերեսօք սիրեցելոյն Ծնողի. Հանդիպումն ամենեւին գեղեցիկ, հանդիպումն յաւերժական յիշատակաց արժանի.

Ուրախ լեր Դպրոցդ Հայկազեան, ուրախ լերուք Մեծապատիւ Հոգաբարձուք Տանս այսորիկ, ուրախ լերուք և Դուք, յարգելի աշխատակիցք իմ և մատաղերամ մանկտիդ Հայկազեան. ահա եկեալ է մեծ տանուտէրն, գերագոյն պաշտպանն մերոյս Հայկական լուսաւորութեան Սիոնի, հանդէս առնել Ձերոց վաստակոց և ճգանց, հայրական սրտիւ ուրախանալ և պատուասիրել աշխատաւորացդ արդիւնագործութեամբ և աշակերտելոցդ յառաջադիմութեամբ յուսմունս և նախանձաւորութեամբ շնորհացն Աստուծոյ, որ լոյսն են. Երանի՜ մեզ՝ կոչեցելոցս 'ի սպասաւորութիւն սրբութեան սեղանի, եթէ Տէրն զիւրաքանչիւր ոք 'ի մէնջ, հարցաքննեալ գտցէ հաւատարմութեամբ և փութով զիւրն շահեցուցեալ զքանքար և առատ տոկոսեօք աճեցուցեալ. երանի՜ որում վիճակեսցի լսել զգովասանական բան. "Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ. որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից զՔեզ. մուտ յուրախութիւն Տեառն Քո."

Բայց ես 'ի ժամու ոչ 'ի փոքու մտածութեան կամ. ոչ զի անփոյթ և անհոգ գտեալ իցէ ուրուք 'ի մէնջ առ ի խրովանն տնկել և սերմանել զիւրն որոշեալ սահման հողոյ, այլ թէ ո՛ր այն պայմանք իցեն, ընդ որովք վիճակեալ է մերում դպրոցի զիւրն գործել զգործ, դէմ յանդիման մերոց բազմապահանջ ժամանակաց. Ամենայն անդաստան, և առաւել իմանալին անդաստան որ և է ազգի, հարուստ ժամանակս անմշակ և ամայի թողեալ, ոչ է բնաւորեալ նոյն ժամայն արդիւնս մեծամեծս գործել. ասա ուրեմն աշխատասէր երկրագործին հարկ 'ի վերայ հասանէ նախ և յառաջ արօրս կազմել, լուծս յօրինել, ակօսարեկ պատառել զկորդացեալն անդաստան, մինչև հնար իցէ գալ 'ի սերմնարկութիւն, իսկ սոյն այս սերմնարկութիւն կարօտ գոյ դարձեալ ժրաջան ջուրտուութեան և բազմազիմ խնամոց մինչև յիւրում ժամանակի 'ի վեր երևել ակնկալելոցն արգասեաց. Նոյն բանք են, Վեհամեծար Տէր, և զմերոյս իմանալի երկրագործութենէ Հայկական անդաստանիս այսորիկ, ուր՝ ցաւ է ասել, աշխատութիւնք անթիւք և անհամարք, իսկ նշանք և հնարաւորութիւնք սակաւ առ 'ի չքաւորութենէ նիւթականին կարողութեան.

Մեք քաջայոյս եմք, թէ՝ Վեհամեծար Տէրդ իւրովն շրջահայեաց տեսութեամբ մտօ եղեալ ամենեւին դժուարին պայմանացն, ընդ որովք վիճակեալ է աշխատել դպրոցիս այսմիկ, ներողամիտ աչօք ունիցի նայել 'ի չափաւոր վաստակս մեր, ոչ նախ քան զժամանակն առատս պահանջելով պտուղս 'ի ծառոյն.

Վեհամեծա՛ր Տէր, օրհնեա՛ զտունս զայս և զանձնանուէր աշխատաւոր Հոգաբարձուս սորա՝ զՈւսուցիչս և զաշակերտեալ մանկտին ընդ յարկաւ սորա. Կարող աջով Քով հովանաւորեա՛ զԴպրոցս զայս, որպէս զի այս Տուն, միակ տուն Հայկազեան կրթութեան և դաստիարակութեան 'ի Ռուսաստանեայս պահեալ և պահպանեալ յամենայն ձախորդութենէ աճեսցէ, զօրասցի և յիւրում ժամանակի պտղաբեր լիցի յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեայց աշխարհի.

Ս. Նազարեանց: